Բրիգամ Յանգի օրինակը

Քննարկում 1
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՒՅԹԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկսեք՝ տալով նմանատիպ հարցեր.

- Ինչպե՞ս եք վերաբերվում հրապարակային ելույթին: Ինչո՞ւ:

Կարդացեք կամ ամփոփ ներկայացրեք հետևյալը.

Բրիգամ Յանգի ամենամեծ դժվարություններից մեկը հրապարակային ելույթն էր: Նա ասել է. «Ես ելույթ ունենալու ունակությունից այնքան զուրկ էի, որքան մարդը կարող է զուրկ լինել» (*Journal of Discourses*, 5.97): Նա հիշեց իր մկրտությունից մեկ շաբաթ անց տեղի ունեցած մի դեպք, երբ ինքը ակնկալում էր, որ Եկեղեցու անդամ չորս փորձառու խոսնակներ պետք է քարոզեն, սակայն նրանք դա չարեցին: Նա ասել է.

> Ես պարզապես երեխա էի, ինչ վերաբերում էր հրապարակային խոսքին և աշխարհի իմացությանը. բայց Տիրոջ Հոգին ինձ վրա էր, և ես զգում էի, որ ոսկորներս կհալվեն իմ ներսում, եթե չխոսեմ ժողովրդի հետ և չպատմեմ նրանց այն, ինչ տեսել, լսել և սովորել եմ, այն, ինչ զգացել եմ և ինչից ուրախացել եմ. և առաջին ելույթը, որով ես հանդես եկա, տևեց ավելի քան մեկ ժամ: Ես բացեցի բերանս, և Տերը լցրեց այն: (Բրիգամ Յանգ, *Journal of Discourses*, 13.211)

- Ի՞նչն էր դժվարԲրիգամ Յանգի կատարած քայլի մեջ:

Առաջարկեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 100.5–6 հատվածները (տես նաև Ելք 4.12, Առակներ 16.1): Ապա հարցրեք.

- Բրիգամ Յանգի փորձառությունն ինչպե՞ս է կապված այս հատվածների հետ:
- Ի՞նչ եք սովորում Տիրոջ մասին, որը կարող է օգնել ձեզ:

Կիսվեք, թե ինչ մտքեր ունեք Տիրոջն ապավինելու և ձեր իմացածով կիսվելու պատրաստակամության վերաբերյալ:

Քննարկում 2
ԲՐԻԳԱՄԻ ՁՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սկսեք՝ տալով նմանատիպ հարց.

- Ի՞նչ զոհողություններ են պահանջվում միսիա ծառայելու համար:

Կարդացեք կամ ամփոփ ներկայացրեք հետևյալը.

Նույն տարում, երբ Բրիգամ Յանգը մկրտվեց, նրա կինը մահացավ: Մեծ զոհաբերությամբ նա կազմակերպեց իր երկու երեխաների խնամքը և միսիա ծառայեց Նյու Յորքում և վերին Կանադայում, որտեղ մկրտեց մի քանի մարդու:

Բրիգամը նկարագրել է իր ժամանումը Կիրթլենդ (Օհայո), մոտ մեկ տարի միսիա ծառայելուց հետո.

> Եթե երբևէ ինձանից ավելի աղքատ մարդ է եղել, որը հավաքվել է Սրբերի հետ, ապա դա այն պատճառով է, որ նա ոչինչ չի ունեցել: . . . Ես երկու երեխա ունեի, որոնց մասին պետք է հոգ տանեի: . . . Ես այրի էի: . . . Կոշիկ չունեի, բացի մի զույգ փոխառված կոշիկներից: Ձմեռային հագուստ չունեի, բացի ինքնուրույն կարված մի վերարկուից, որը հագնում էի երեք-չորս տարի: . . . Ես ճամփորդում էի, քարոզում էի և նվիրաբերում էի իմ ունեցվածքի յուրաքանչյուր դոլարը: (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 243)

Առաջարկեք ուսանողներից մեկին կարդալ Ղուկաս 18.18–23 հատվածները՝ փնտրելով, թե Բրիգամ Յանգի արձագանքը ծառայելու հրավերներին ինչպես է տարբերվում այն մարդու արձագանքից, որը հաղորդակցվեց է Փրկչի հետ այս պատմության մեջ:

- Ի՞նչ գիտեք Տիրոջ մասին, որը կարող է օգնել մեզ պատրաստակամ լինել զոհաբերություններ անել, ինչպես Բրիգամ Յանգն արեց:
- Բացի միսիաներ ծառայելուց, ի՞նչ այլ եղանակներով Տերը կարող է ցանկանալ, որ մենք զոհաբերություն անենք՝ Իրեն ծառայելու համար:

Կիսվեք, թե ինչ մտքեր ունեք Տիրոջը ծառայելու համար զոհաբերության պատրաստ լինելու մասին:

Քննարկում 3

ԲՐԻԳԱՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Սկսեք՝ տալով նմանատիպ հարց.

- Ի՞նչ պատճառներով է միսիոներին անհրաժեշտ Տիրոջ օգնությունը:

Կարդացեք կամ ամփոփ ներկայացրեք հետևյալը.

Կրկին ամուսնանալուց և հինգ այլ միսիաներում ծառայելուց հետո Բրիգամը այլ առաքյալների հետ կանչվեց միսիա ծառայելու Անգլիայում:

Բրիգամը նկարագրել է իր միսիան.

Մենք եկանք օտար մի երկիր՝ որպես օտարականներ, առանց փողի, բայց Աստծո ողորմությամբ: Եվ մենք ձեռք բերեցինք շատ ընկերներ, Եկեղեցիներ հիմնեցինք Մեծ Բրիտանիայի թագավորության գրեթե բոլոր նշանավոր քաղաքներում, մկրտվեցինք յոթից ութ հազար մարդ, տպագրեցինք Մորմոնի Գրքի 5000 օրինակ . . . և հազարավոր մարդկանց սրտերում ցանեցինք հավերժական ճշմարտության սերմերը, . . . այս բոլոր բաներում ես ճանաչում եմ Աստծո ձեռքը: (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 6)

Առաջարկեք որևէ ուսանողի կարդալ Ամմոնի խոսքերը Ալմա 26.12–13 հատվածներում: Ապա հարցրեք.

- Ինչպե՞ս են Բրիգամ Յանգի խոսքերը համեմատվում Ամմոնի խոսքերի հետ:
- Ձեր կարծիքով, Տիրոջն ապավինելն ինչո՞ւ է կարևոր, երբ ձգտում եք ծառայել Նրան:
- Ինչպե՞ս եք փորձել ապավինել Տիրոջը՝ Նրան ծառայելիս:

Կիսվեք Տիրոջն ապավինելու վերաբերյալ ձեր մտքերով կամ զգացմունքներով՝ Նրան ծառայելիս:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_441-1